ԴԺՈԽՔԻ ՀԱՆԴԵՊ

Հո՜ւշ. հասավ օրը՝ վերջի՜ն, ահավո՜ր։
Սրրով ու հրրով բացվում էն էսօր
Հայոց դրժոխքի դրռներն ամրափակ.
Սարսափի պիտի աշխարհքը համակ,
Եվ մարդն ամաչի գիլից ու շանից,
Որ մարդ է ծընվել՝ մարդու նըմանից։
Ո՜ւհ, ինչքա՜ն մութն է գարշահոտ ու պաղ...
Ինչքան ոսկորնե՜ր, կըմախքնե՜ր անթաղ...
Էլ ի՞նչ կա հեռվում... հեռվի խավարում...
Ով է իմանում... ում աչքն է զորում...
Մեջտեղը մենակ, ժեռուտ բարձունքին,
Կանգնած է մայրը հողմերի տակին.
Որդու արյունը իր ձեռքն են տըվել.
– Խըմիր սուլթանի կենացը դու էլ...
Եվ նա, որ մարդ էր ու մայր էր երեկ,
Այժըմ, էն ժայռին կանգնած կիսամերկ,
Անուժ ու ապուշ խելագար է մի,
Բաժակը ձեռքին, որ պիտի խըմի...
Կանգնած է մենակ, և լոկ մոլեգին
Հողմերն են ոռնում, ու նըրանք չորս դին...
Բայց՝ հո՜ւշ. լռությո՜ւն... մըթին, ահավոր
Երկինք են նայում կըմախքները չոր,
Ու իրենց կարկամ շըրթունքները բաց՝
Խո՜սք են ասելու աշխարհքի դիմաց,
Խոսք, որ չի լըսված դեռևս լուսնի տակ...
Սարսափի պիտի աշխարհ բովանդակ
Եվ մարդն ամաչի գիլից ու շանից
Որ մարդ է ծընվել մարդու նըմանից։